

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

▯B

ԽՈՐՀՐԴԻ 1996 թվականի ապրիլի 29-ի 96/22/ԵՀ ՀՐԱՀԱՆԳԸ
անասնապահության մեջ հորմոնային եւ հակաթիրոիդային ազդեցությամբ որոշ նյութերի ու բետա համազդիչների (ագոնիստների) օգտագործման նկատմամբ արգելքի եւ 81/602/ԵՏՀ, 88/146/ԵՏՀ ու 88/299/ԵՏՀ հրահանգներն ուժը կորցրած ճանաչելու մասին

(ՊՏ L 125, 23.05.1996թ., էջ 3)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		Թիվ	էջ	ամսաթիվ
▯M1	Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 22-ի 2003/74/ԵՀ հրահանգ	L 262	17	14.10.2003թ.
▯M2	Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/97/ԵՀ հրահանգ (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)	L 318	9	28.11.2008թ.

▼B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 43-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը¹,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը²,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը³,

1) քանի որ 81/602/ԵՏՀ հրահանգով⁴ արգելվում են հորմոնային ազդեցությամբ որոշ նյութեր և հակաթիրոիդային ազդեցությամբ ցանկացած նյութ և, քանի որ 88/146/ԵՏՀ հրահանգով⁵ արգելվում է անասնապահության մեջ հորմոնային ազդեցությամբ որոշ նյութերի օգտագործումը՝ միեւնույն ժամանակ թույլատրելով շեղումներ,

2) քանի որ Խորհրդի 88/299/ԵՏՀ հրահանգով⁶ սահմանվում են 88/146/ԵՏՀ հրահանգի 7-րդ հոդվածով նախատեսված կենդանիների որոշ կատեգորիաների և նրանց մսի առետրի նկատմամբ արգելքից մասնակի շեղումների կիրառման պայմանները,

3) քանի որ մսի և կենդանական ծագմամբ այլ սննդամթերքի մեջ թողած մնացորդների պատճառով հակաթիրոիդային, կտղուցածին (էստրոգենային), այրածին (անդրոգենային) կամ գեստագենային ազդեցությամբ որոշ նյութեր կարող են վտանգավոր լինել սպառողների համար և նաեւ կարող են ազդել կենդանական ծագմամբ սննդամթերքի որակի վրա,

4) քանի որ նյութագոյացնող (անաբոլիկ) ազդեցությամբ նոր նյութերը, ինչպիսիք բետա համազդիչներն են, ապօրինաբար օգտագործվում են անասնաբուծության մեջ՝ կենդանիների աճն ու մթերատվությունը խթանելու նպատակով,

¹ՊՏ թիվ C 302, 09.11.1993թ., էջ 8 և ՊՏ թիվ C 222, 10.08.1994թ., էջ 16:

²ՊՏ թիվ C 128, 09.05.1994թ., էջ 107:

³ՊՏ թիվ C 52, 19.02.1994թ., էջ 30:

⁴ՊՏ թիվ L 222, 07.08.1981թ., էջ 32: 85/358/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 191, 23.07.1985թ., էջ 46):

⁵ՊՏ թիվ L 70, 16.03.1988թ., էջ 16: 1994 թվականի «Անդամակցության ակտ»-ով փոփոխված հրահանգ:

⁶ՊՏ թիվ L 128, 21.05.1988թ., էջ 36:

5) քանի որ 1990-1992թթ. անդամ պետություններում Հանձնաժողովի կողմից անցկացված հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ բետա համազդիչները լայնորեն կիրառվում են անասնաբուծության ոլորտում՝ հանգեցնելով դրանց ապօրինի օգտագործմանը,

6) քանի որ բետա համազդիչների ոչ ճիշտ օգտագործումը կարող է լրջորեն վտանգել մարդու առողջությունը. քանի որ, ելնելով սպառողների շահերից, պետք է արգելել բետա համազդիչներ պահելը, դրանք ցանկացած տեսակի կենդանու ներարկելը եւ այդ նպատակով դրանք շուկա հանելը. քանի որ, ավելին, ստիբեններ եւ հակաթիրոիդային նյութեր պահելը, դրանք ցանկացած տեսակի կենդանու ներարկելը եւ այդ նպատակով դրանք շուկա հանելը պետք է արգելել, իսկ այլ նյութերի օգտագործումը՝ կանոնակարգել,

7) քանի որ, այնուամենայնիվ, բետա համազդիչների հիմքով դեղամիջոցների ներարկումը կարելի է թույլատրել խոշոր եղջերավոր անասունների, ծիազգի կենդանիների եւ տնային կենդանիների որոշ կատեգորիաների դեպքում՝ հստակ սահմանված թերապեւտիկ նպատակներով,

8) քանի որ, ավելին, անհրաժեշտ է ապահովել, որ բոլոր սպառողները հնարավորություն ունենան մատակարարման միեւնոյն պայմաններով ձեռք բերելու միս եւ դրանից ստացված սննդամթերք, եւ, որ այդ արտադրանքը հնարավորինս համապատասխանի նրանց շահերին եւ սպասելիքներին. քանի որ, հաշվի առնելով սպառողների խոցելիությունը, սա կարող է հանգեցնել միայն տվյալ արտադրանքի սպառման ավելացմանը,

9) քանի որ բուման (գիրացման) նպատակով հորմոնային նյութերի օգտագործման նկատմամբ արգելքը պետք շարունակել կիրառել. քանի որ թերապեւտիկ եւ զոոտեխնիկական նպատակներով որոշ նյութերի օգտագործումը կարող է թույլատրվել,

սակայն խստորեն հսկվել՝ ցանկացած սխալ օգտագործում կանխելու նպատակով,

10) քանի որ Համայնքի մակարդակում սպասման ժամկետները համապատասխանեցված չեն եւ անդամ պետությունների միջեւ կան զգալի տարբերություններ, հատկապես թույլատրված անասնաբուժական դեղամիջոցների առնչությամբ, որոնք պարունակում են հորմոնային նյութեր կամ բետա համազդիչներ. քանի որ, ելնելով համապատասխանելիության շահերից, նման դեղամիջոցների համար, հետետաքար, պետք է սահմանել առավելագույն սպասման շրջան,

11) քանի որ, ավելին, կենդանի կենդանիները, որոնց այդ կերպ բուժել են թերապետիկ կամ զոոտեխնիկական նպատակներով, եւ նման կենդանիներից ստացված միսը, որպես ընդհանուր կանոն, չպետք է վաճառվեն, որովհետեւ այն կարող է խախտել գործողությունների ծրագրի հսկման մեխանիզմների արդյունավետությունը՝ որպես ամբողջություն. քանի որ, այնուամենայնիվ, արգելքից շեղումները, համաձայն որոշ պայմանների, կարող են նախատեսվել տեսակի վերարտադրության համար նախատեսված կենդանիների եւ իրենց վերարտադրողական կյանքի վերջում բուժվող կենդանիների ներհամայնքային առետորի ու երրորդ երկրներից ներկրման առումով,

12) քանի որ նման շեղումներ կարող են թույլատրվել համապատասխան երաշխիքների դեպքում՝ առետորի խաթարումը կանխելու նպատակով. քանի որ նման երաշխիքները պետք է տարածվեն այն արտադրանքի վրա, որը կարելի է օգտագործել, դրանց օգտագործումը կարգավորող պայմանների եւ ստուգումների վրա, որպեսզի ապահովեն այդ պայմաններին հետեւելը՝ հատկապես հաշվի առնելով անհրաժեշտ սպասման շրջանը,

13) քանի որ անհրաժեշտ է դրույթ ավելացնել՝ սույն Հրահանգից բխող դրույթների կիրարկումն արդյունավետորեն հաստատելու համար,

14) քանի որ 81/602/ԵՏՀ, 88/146/ԵՏՀ եւ 88/299/ԵՏՀ հրահանգները պետք է ուժը կորցրած ճանաչվեն,

15) քանի որ, եթե անասնապահության մեջ աճի եւ մթերատվության խթանիչների ապօրինի օգտագործման դեմ անհրաժեշտ է արդյունավետորեն պայքարել բոլոր անդամ պետություններում, ապա միջոցառումներ պետք է համայնքի մակարդակով կազմակերպվեն,

16) քանի որ 1996 թվականի հունվարի 18-ին Եվրոպական պառլամենտը խնդրանքով դիմել է Հանձնաժողով եւ Խորհուրդ, որ շարունակեն արգելել հորմոններով աճեցված մսի ներկրումը Համայնք, պահանջել է անասնապահության մեջ աճի խթանիչների օգտագործման նկատմամբ լրիվ արգելքի պահպանումը եւ այդ նպատակով խնդրանքով դիմել է Խորհուրդ՝ անհապաղ ընդունել Հանձնաժողովի առաջարկը, որի վերաբերյալ Եվրոպական պառլամենտը եզրակացություն էր ներկայացրել 1994 թվականի ապրիլի 19-ին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Սույն Հրահանգի նպատակներով օգտագործվում են 64/433/ԵՏՀ⁷, 71/118/ԵՏՀ⁸, 77/99/ԵՏՀ⁹, եւ 91/495/ԵՏՀ¹⁰ հրահանգներում տրված մսի եւ մսամթերքի սահմանումները, 91/493/ԵՏՀ¹¹ հրահանգում տրված ջրային կենդանիներից ստացված արտադրանքի

⁷ՊՏ թիվ 121, 29.07.1964թ., էջ 2012/64: 95/23/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 243, 11.10.1995թ., էջ 7):

⁸ՊՏ թիվ L 55, 08.03.1971թ., էջ 23: 1994 թվականի «Անդամակցության ակտ»-ով վերջին անգամ փոփոխված հրահանգ:

⁹ՊՏ թիվ L 26, 31.1.1977թ., էջ 85: 85/68/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 332, 30.12.1995թ., էջ 10):

¹⁰ՊՏ թիվ L 268, 24.09.1991թ., էջ 41: 1994 թվականի «Անդամակցության ակտ»-ով վերջին անգամ փոփոխված հրահանգ:

¹¹ՊՏ թիվ L 268, 24.09.1991թ., էջ 15: 95/71/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 332, 30.12.1995թ., էջ 40):

սահմանումները 81/851/ԵՏՀ¹² եւ 81/852/ԵՏՀ¹³ հրահանգներում տրված անասնաբուժական դեղագործական արտադրանքի սահմանումները:

2. Բացի դրանից՝ կիրառվում են նաեւ հետեւյալ սահմանումները.

ա) «գյուղատնտեսական կենդանիներ» նշանակում է խոշոր եղջերավոր անասունների, խոզի, ոչխարի եւ այծի տեսակներին պատկանող ընտանի կենդանիներ, ընտանի միասնբակավորներ, թռչուններ եւ ճագարներ, ինչպես նաեւ այդ տեսակների վայրի կենդանիներն ու վայրի որոճողները, որոնք աճեցվել են տնտեսությունում,

▼M2

բ) «թերապեւտիկ բուժում» նշանակում է, սույն Հրահանգի 4-րդ հոդվածի համաձայն, անասնաբույժի կողմից բուժզննումից հետո բեղմնավորման հետ կապված բարդությունների բուժման, այդ թվում՝ անցանկալի հղիության ընդհատման նպատակով թույլատրված նյութի ներարկում առանձին գյուղատնտեսական կենդանու, իսկ բետա համազդիչների դեպքում՝ կովերի մոտ ծննդաբերության ժամանակ ծննդաբերության լուծանքի (տոկոլիզ) դրդում, ինչպես նաեւ շնչառական խնդիրների, մակույկաձեւ ոսկորի հիվանդության եւ սմբակի բորբոքման (laminitis) բուժում, եւ ձիազգի կենդանիների մոտ ծննդաբերության լուծանքի (տոկոլիզ) դրդում,

▼B

գ) «զոոտեխնիկական բուժում» նշանակում է ներարկում.

i) սույն Հրահանգի 5-րդ հոդվածի համաձայն՝ անասնաբույժի կողմից բուժզննումից հետո կամ, 5-րդ հոդվածի երկրորդ պարբերության համաձայն, նրա պատասխանատվությամբ կտղուցի (էստրուս) համաժամանակեցման եւ սաղմերի ներպատվաստման համար դոնորի ու ընդունողի նախապատրաստման նպատակով թույլատրված ցանկացած նյութի ներարկում առանձին գյուղատնտեսական կենդանու,

ii) ջրային կենդանիների դեպքում՝ սեռը փոխելու նպատակով վերարտադրվող կենդանիների խմբին՝ անասնաբույժի նշանակմամբ եւ նրա պատասխանատվությամբ,

¹²ՊՏ թիվ L 317, 06.11.1981թ., էջ 1: 93/40/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 214, 24.08.1993թ., էջ 31):

¹³ՊՏ թիվ L 317, 06.11.1981թ., էջ 16: 93/40/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 214, 24.08.1993թ., էջ 31):

դ) «ապօրինի բուժում» նշանակում է չթույլատրված նյութերի կամ արտադրանքի օգտագործումը, կամ Համայնքի օրենսդրությամբ թույլատրված նյութերի կամ արտադրանքի օգտագործումը՝ այն նպատակներով կամ պայմաններում, որոնք նախատեսված չեն Համայնքի օրենսդրությամբ:

▼M2

Հոդված 2

Անդամ պետություններն արգելում են II հավելվածում թվարկված նյութերի շուկայահանումը՝ որեւէ կենդանու ներարկելու համար, որի միսը եւ արտադրանքը նախատեսված են մարդու կողմից սպառման համար, այն նպատակներով, որոնք նախատեսված չեն 4-րդ հոդվածի 2-րդ կետով:

▼M1

Հոդված 3

Անդամ պետություններն արգելում են II հավելվածում թվարկված նյութերի դեպքում, եւ պայմանականորեն արգելում են III հավելվածում թվարկված նյութերի դեպքում.

ա) որեւէ եղանակով այդ նյութերը ներարկել գյուղատնտեսական կամ ջրային կենդանիներին,

բ)

- ֆերմայում (ա) կետում նշված կենդանիներ պահելը՝ բացի պաշտոնական հսկողության ներքո պահելուց, եւ
- մարդու կողմից սպառման նպատակով շուկա հանել կամ մորթել գյուղատնտեսական այն կենդանիներին,

որոնցում պարունակվում են II հավելվածում եւ III հավելվածում նշված նյութերը, կամ որոնցում հաստատվել է նման նյութերի առկայությունը, քանի դեռ ապացույց չի ներկայացվել, որ տվյալ կենդանիները ենթարկվել են բուժման՝ 4-րդ եւ 5-րդ հոդվածների համաձայն կամ M2 ————— M համաձայն

գ) մարդու կողմից սպառման համար շուկա հանել ջրային կենդանիներ, որոնց ներարկվել են վերոհիշյալ նյութերը, եւ նման կենդանիներից ստացված՝ վերամշակված արտադրանքը,

դ) շուկա հանել (բ) կետում նշված կենդանիների միսը,

ե) վերամշակել (դ) կետում նշված միսը:

▼B

Հոդված 4

Չնայած 2-րդ եւ 3-րդ հոդվածներին՝ անդամ պետությունները կարող են թույլատրել.

1. թերապեւտիկ նպատակներով գյուղատնտեսական կենդանիներին ՈՄ1 —————β—————
— ը տեստոստերոնի եւ պրոգեստերոնի ու ածանցյալների ներարկումը, որոնք գործածման տեղում ներծծվելուց հետո հիդրոլիզի ժամանակ հեշտությամբ արտադրում են սկզբնական միացություն: Թերապեւտիկ բուժման համար անասնաբուժական դեղամիջոցների օգտագործումը պետք է համապատասխանի 81/851/ԵՏՀ հրահանգով նախատեսված շուկայահանման պահանջներին եւ ներարկվի միայն անասնաբույժի կողմից՝ հստակ որոշված գյուղատնտեսական կենդանիներին՝ սրսկելու միջոցով կամ ձվարանների թերֆունկցիան բուժելու նպատակով հեշտոցային պարոյրների՝, սակայն ոչ իմպլանտի միջոցով: Որոշված կենդանիների բուժումը պետք է գրանցվի դրա համար պատասխանատու անասնաբույժի կողմից: Նա պետք է գրանցամատյանում գրանցի առնվազն հետեւյալ տվյալները, որը կարող է լինել այն, ինչ նախատեսված է 81/851/ԵՏՀ հրահանգով.

- բուժման տեսակը,
- թույլատրված դեղամիջոցների/արտադրանքի տեսակը,
- բուժման ամսաթիվը,
- բուժման ենթարկված կենդանիների նույնականությունը:

Գրանցամատյանը պետք է ցպահանջ հասանելի լինի իրավասու մարմնին,

2. թերապեւտիկ նպատակներով թույլատրված՝ հետեւյալ նյութերը պարունակող անասնաբուժական դեղամիջոցների ներարկումը.

▼M2

i) ալիլային տրենբոլոն, որն ընդունվում է բերանային, կամ բետա համազդիչներ՝ ձիազգիներին՝ պայմանով, որ դրանք օգտագործվեն արտադրողի ցուցումներին համապատասխան,

▼B

ii) բետա համագրիչներ, սրսկման եղանակով, կովերին՝ ծննդաբերության ժամանակ ծննդաբերության լուծանք դրդելու նպատակով:

Նման նյութերը պետք է ներարկվեն անասնաբույժի կողմից կամ, (i) ենթակետում նշված անասնաբուժական դեղամիջոցների դեպքում՝ նրա անմիջական պատասխանատվությամբ. բուժումը պետք է գրանցվի դրա համար պատասխանատու անասնաբույժի կողմից, որը գրանցում է առնվազն 1-ին կետում նշված տվյալները:

Ֆերմերներին արգելվում է պահել բետա համագրիչներ պարունակող անասնաբուժական դեղամիջոցներ, որոնք կարող են օգտագործվել ծննդաբերության լուծանքի բուժման ժամանակ՝ դրդման նպատակներով:

Այնուամենայնիվ, չսահմանափակելով 2(ii) կետի առաջին ենթապարբերությունը, արգելվում է մթերատու կենդանիների՝ ներառյալ վերարտադրվող կենդանիների թերապետիկ բուժումը, նրանց վերարտադրողական կյանքի վերջում:

Հոդված 5

ՈՄ1 Չնայած 3(ա) հոդվածին եւ չսահմանափակելով 2-րդ հոդվածը՝ անդամ պետությունները կարող են թույլատրել գյուղատնտեսական կենդանիներին զոոտեխնիկական բուժման նպատակներով կտղուցածին (բացառությամբ 17β-էստրադիոլի եւ նրա եթերանման ածանցյալների), այրածին կամ գեստագենային ազդեցությամբ անասնաբուժական դեղամիջոցների ներարկումը, որոնք թույլատրված են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 6-ի անասնաբուժական դեղամիջոցներին վերաբերող Համայնքի կողի մասին 2001/82/ԵՀ հրահանգի համաձայն¹⁴: Նման անասնաբուժական դեղամիջոցները անասնաբույժի կողմից պետք է ներարկվեն հստակորեն որոշված կենդանիներին. բուժումը պետք է գրանցվի դրա համար պատասխանատու անասնաբույժի կողմից՝ համաձայն 4-րդ հոդվածի 1-ին կետի:

Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են թույլատրել, որպեսզի կտղուցի (էստրոս) համաժամանակեցումը եւ սաղմերի ներպատվաստման համար դոնորի ու ընդունողի նախապատրաստումն իրականացվեն ոչ թե անմիջապես անասնաբույժի կողմից, այլ նրա պատասխանատվությամբ:

¹⁴ՊՏ թիվ 311, 28.11.2001թ., էջ 1:

Ջրային կենդանիների առնչությամբ, մանրածկների սեռը փոխելու նպատակով առաջին երեք ամսվա ընթացքում կարելի է բուժել անասնաբուժական դեղամիջոցներով, որոնք ունեն այրածին ազդեցություն, եւ որոնք թույլատրված են 81/851/ԵՏՀ եւ 81/852/ԵՏՀ հրահանգներով:

Սույն հոդվածով նախատեսված դեպքերում անասնաբույժը դուրս է գրում մեկանգամյա օգտագործման դեղատոմս՝ մատնանշելով անհրաժեշտ բուժումը եւ պահանջվող արտադրանքի քանակությունը, եւ գրանցում է նշանակված արտադրանքը:

Այնուամենայնիվ, արգելվում է մթերատու կենդանիների՝ ներառյալ բուման (գիրացման) շրջանի ընթացքում վերարտադրողական կյանքի վերջում գտնվող վերարտադրվող կենդանիների զոոտեխնիկական բուժումը:

▼M2 _____

▼B

Հոդված 6

▼M1

1. Հորմոնային արտադրանքը եւ բետա համազդիչները, որոնց ներարկումը գյուղատնտեսական կենդանիներին թույլատրվում է 4-րդ, 5-րդ հոդվածների կամ M2 _____ համաձայն, պետք է համապատասխանեն 2001/82/ԵՀ հրահանգի պահանջներին:

▼B

2. Ներքոհիշյալները, այնուամենայնիվ, չի կարելի թույլատրել՝ համաձայն 1-ին պարբերության.

ա) հետեւյալ հորմոնային արտադրանքը.

i) որպես նստվածք հանդես եկող արտադրանքը,

ii) բուժումից հետո ավելի քան 15 օր սպասման ժամկետ ունեցող արտադրանքը,

iii) արտադրանքը,

— որը թույլատրվել է թիվ 2309/93 (ԵՏՀ) կանոնակարգով արված փոփոխությանը նախորդող կանոններով¹⁵,

¹⁵ՊՏ թիվ L 214, 24.08.1993թ., էջ 1:

— որի օգտագործման պայմանները հայտնի չեն,

— որի համար գոյություն չունեն ազդանյութեր (ռեագենտներ) կամ սարքավորումներ վերլուծական մեթոդներով օգտագործելու համար՝ թույլատրելի սահմանները գերազանցող մնացորդների առկայությունը հայտնաբերելու նպատակով,

բ) բետա համազդիչներ պարունակող անասնաբուժական դեղամիջոցներ, որոնք ունեն բուժման ավարտից հետո ավելի քան 28-օրյա սպասման ժամկետ:

Հոդված 7

▼M1

1. Առետրի նպատակով անդամ պետությունները կարող են թույլատրել վերարտադրման նպատակով կենդանիների եւ վերարտադրողական կյանքի վերջում գտնվող վերարտադրվող կենդանիների շուկայահանումը, որոնք վերջին ժամանակահատվածում ենթարկվել են 4-րդ, 5-րդ հոդվածներում կամ Մ2 ————— ի նշված բուժման, եւ կարող են թույլատրել Համայնքի դրոշմակնիքի զետեղումը նման կենդանիներից ստացված մսի վրա, եթե պահպանվել են 4-րդ, 5-րդ հոդվածներով կամ Մ2 ————— ի սահմանված պայմանները եւ շուկայահանման թույլտվությամբ նախատեսված սպասման ժամկետները:

▼B

Այնուամենայնիվ, բարձրարժեք ձիերի եւ, հատկապես վարգաձիերի, սպորտային ձիերի, կրկեսային ձիերի կամ ձիաբուծարանների կամ ցուցահանդեսների համար նախատեսվող ձիերի՝ ներառյալ գրանցված ձիազգիների առետուրը, որոնց ալիլային տրենբուլոն կամ բետա համազդիչներ պարունակող անասնաբուժական դեղամիջոցներ են ներարկվել՝ 4-րդ հոդվածում նշված նպատակների համար, կարող է տեղի ունենալ նախքան սպասման շրջանի ավարտը, պայմանով, որ պահպանվել են ներարկումը կարգավորող պայմանները եւ, որ բուժման տեսակն ու ամսաթիվը ներառված են այդ կենդանիներին կից տրված հավաստագրերում կամ անձնագրերում:

2. Այն կենդանիների միսը կամ նրանցից ստացված արտադրանքը, որոնց, սույն Հրահանգի ֆարմակոպեական դրոյթներին համապատասխան, ներարկվել են կտղուցածին, այրածին կամ գեստագենային ազդեցությամբ նյութեր կամ բետա համազդիչներ, չի կարելի շուկայահանել մարդու կողմից սպառման նպատակով, քանի դեռ այդ կենդանիները չեն

ենթարկվել անասնաբուժական դեղամիջոցներով բուժման՝ համաձայն 6-րդ հոդվածի պահանջների, եւ այնքանով, որքանով նախքան կենդանիներին մորթելը պահպանվել են սահմանված սպասման ժամկետները:

Հոդված 8

Անդամ պետություններն ապահովում են, որ.

▼M1

2-րդ եւ 3-րդ հոդվածներում նշված նյութերի ներկրման, արտադրման, պահեստավորման, բաշխման, վաճառքի եւ օգտագործման ժամանակ դրանց տիրապետումը վերապահվում է ներպետական օրենսդրությամբ լիազորված անձանց՝ 2001/82/ԵՀ հրահանգի 68-րդ հոդվածին համապատասխան:

▼B

2. Ի լրումն խնդրո առարկա տարբեր արտադրանքների շուկայահանումը կարգավորող հրահանգներով նախատեսված ստուգումների՝ 96/23/ԵՀ հրահանգի 11-րդ հոդվածով նախատեսված պաշտոնական ստուգումներն¹⁶ իրականացվում են իրավասու ազգային մարմինների կողմից առանց նախապես ծանուցելու, որպեսզի բացահայտեն.

ա) Մ1 2-րդ եւ 3-րդ հոդվածներով՝ արգելված նյութերի կամ արտադրանքի տիրապետումը կամ առկայությունը, որոնք նախատեսված են կենդանիներին բուժման եւ գիրացման նպատակով ներարկելու համար;

բ) կենդանիների ապօրինի բուժումը,

գ) 6-րդ հոդվածով նախատեսված սպասման ժամկետները չպահպանելը,

դ) Մ1 4-րդ, 5-րդ հոդվածներով եւ Մ2 _____ Ի Ի սահմանված որոշ նյութերի կամ արտադրանքի օգտագործման նկատմամբ սահմանափակումները չպահպանելը ,

3. վերլուծությունները՝ պարզելու ներքոհիշյալների առկայությունը.

ա) առաջին կետում նշված նյութերի՝ կենդանիների օրգանիզմում, կենդանիների խմելու ջրում եւ բոլոր վայրերում, որտեղ կենդանիները բուծվում կամ պահվում են,

¹⁶Տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 10-րդ էջը:

բ) վերը նշված նյութերի մնացորդների՝ կենդանի կենդանիների, նրանց արտաթորանքի ու մարմնի հեղուկների, եւ կենդանական հյուսվածքների ու արտադրանքի մեջ,

իրականացվում են 96/23/EC հրահանգի III եւ IV հավելվածներին համապատասխան,

4. որտեղ 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված ստուգումները բացահայտում են.

ա) այն նյութերի կամ արտադրանքի առկայությունը, որոնց օգտագործումը կամ տիրապետումն արգելված է, կամ այն նյութերի մնացորդների առկայությունը, որոնց ներարկումը պատկանում է ապօրինի բուժման տեսակին, նման նյութերն ու արտադրանքը բռնագրավվում են, իսկ դրանցով բուժված կենդանիները կամ նրանցից ստացված միսն անցնում են պաշտոնական հսկողության տակ՝ մինչեւ անհրաժեշտ տույժերի կիրառումը:

բ) 2(բ) եւ (գ) կետերի պահանջներին չհետեւելը. իրավասու մարմինները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ խախտման ծանրությանը համապատասխան:

Հոդված 9

Չսահմանափակելով 81/851/ԵՏՀ հրահանգը՝ ձեռնարկումները, որոնք ուղղված են հակաթիրոիդային, կտղուցածին, այրածին կամ գեստագենային ազդեցությամբ նյութեր եւ բետա համազդիչներ գնելուն ու արտադրելուն, ձեռնարկումները, որոնց թույլատրված է նման նյութերը ցանկացած ծավալով շուկա հանել, եւ ձեռնարկումները, որոնք ուղղված են նման նյութերից պատրաստված դեղագործական եւ անասնաբուժական դեղամիջոցներ գնելուն ու արտադրելուն, պահանջվում է պահել գրանցամատյաններ, որտեղ ժամանակագրական հերթականությամբ մանրամասն նշվում են արտադրված կամ ձեռք բերված քանակությունները, եւ նրանք, որոնք վաճառվել կամ օգտագործվել են դեղագործական ու անասնաբուժական դեղամիջոցների արտադրության համար եւ այն անձանց անունները, որոնց վաճառվել են այդ քանակությունները, կամ որոնցից դրանք ձեռք են բերվել:

Վերը նշված տեղեկատվությունը պետք է իրավասու մարմնին ներկայացվի ցպահանջ, իսկ համակարգչայնացված գրանցումների դեպքում՝ տպագիր:

Հոդված 10

Եթե անդամ պետությունում իրականացված ստուգումների արդյունքներով բացահայտվում է, որ կենդանիների կամ արտադրանքների ծագման երկրում չեն հետեւել սույն Հրահանգի պահանջներին, ապա այդ անդամ պետության իրավասու մարմինը հետպահանջի իրավունքով հղում է կատարում Խորհրդի՝ անդամ պետությունների վարչական մարմինների միջեւ փոխօգնության, վերջիններիս եւ Հանձնաժողովի միջեւ համագործակցության մասին 1989 թվականի նոյեմբերի 21-ի 89/608/ԵՏՀ հրահանգին՝ անասնաբուժական եւ զոոտեխնիկական հարցերի վերաբերյալ օրենսդրության ճիշտ կիրառումն ապահովելու նպատակով¹⁷:

Հոդված 11

▼M2

1. Այն երրորդ երկրները, որոնց օրենսդրությամբ թույլատրվում է ստիլբենների, ստիլբենների ածանցյալների, դրանց աղերի եւ եթերների, կամ հակաթիրոիդային նյութերի շուկայահանումը եւ ներարկումը կենդանիների բոլոր տեսակներին, որոնք նախատեսված են մարդու կողմից սպառման համար, չեն հայտնվի Համայնքի օրենսդրությամբ նախատեսված երկրների ոչ մի ցանկում, որտեղից անդամ պետությունները լիազորված են ներկրել գյուղատնտեսական կամ ջրային կենդանիներ կամ այդ կենդանիներից ստացված միս կամ արտադրանք:

▼B

2. Անդամ պետությունները նաեւ արգելում են առաջին պարբերության մեջ նշված որեւէ ցանկում ներառված երրորդ երկրներից ստորեւ նշվածների ներկրումը.

ա) գյուղատնտեսական կամ ջրային կենդանիներ,

ի) որոնց որեւէ եղանակով ներարկվել են ըM1 II հավելվածի Ա ցանկում՝ նշված արտադրանքներ կամ նյութեր,

▼M1

¹⁷ՊՏ թիվ L 351, 2.12.1989թ., էջ 34:

ii) որոնց ներարկվել են II հավելվածի Բ ցանկում եւ III հավելվածում նշված նյութերը, եթե այդ նյութերը ներարկվել են 4-րդ, 5-րդ ՍՄ2 ————— ի եւ 7-րդ հոդվածներով սահմանված դրույթների եւ պահանջների համաձայն, եւ պահպանվել են միջազգային առաջարկություններով թույլատրված սպասման ժամկետները,

▼B

բ) միս եւ արտադրանք, որոնք ստացվել են այն կենդանիներից, որոնց ներկրումն արգելված է՝ համաձայն (ա) կետի:

3. Այնուամենայնիվ, երրորդ երկրներից վերարտադրման համար նախատեսված կենդանիները, վերարտադրողական կյանքի վերջում գտնվող վերարտադրվող կենդանիները, կամ նրանցից ստացված միսը կարելի է ներկրել իրենց կողմից տրամադրվող երաշխիքների հիման վրա, որոնք առնվազն համարժեք են սույն Հրահանգով սահմանվածներին, որոնք հաստատվել են 96/23/ԵՀ հրահանգի 33-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան՝ այդ հրահանգի V գլուխը ուժի մեջ մտցնելու նպատակով:

4. Երրորդ երկրից ներկրումների ստուգումներն իրականացվում են Խորհրդի 1991 թվականի հուլիսի 15-ի 91/496/ԵՏՀ հրահանգի 4(2)(գ) հոդվածին համապատասխան, որով սահմանվում են երրորդ երկրներից Համայնք ներկրվող կենդանիների անասնաբուժական ստուգումների կազմակերպումը կարգավորող սկզբունքները¹⁸, եւ Խորհրդի 1990 թվականի դեկտեմբերի 10-ի 90/675/ԵՏՀ հրահանգի 8(2) հոդվածին համապատասխան, որով սահմանվում են երրորդ երկրներից Համայնք ներկրվող արտադրանքների անասնաբուժական ստուգումների կազմակերպումը կարգավորող սկզբունքները¹⁹:

▼M2

¹⁸ՊՏ թիվ L 268, 24.09.1991թ., էջ 56: Հանձնաժողովի 95/157/ԵՀ որոշմամբ վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 103, 06.05.1995թ., էջ 40):

¹⁹ՊՏ թիվ L 373, 31.12.1990թ., էջ 1: 95/52/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 265, 08.11.1995թ., էջ 16):

Հոդված 11ա

III հավելվածում թվարկված նյութերի առնչությամբ Հանձնաժողովը, հաշվի առնելով վերջին գիտական տվյալները, հավելյալ տեղեկություններ է փնտրում բոլոր հնարավոր աղբյուրներից, եւ ապահովում է այն միջոցները, որոնք կիրառվում են պարբերական վերանայման ներքո՝ Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ ցանկացած անհրաժեշտ առաջարկ ժամանակին ներկայացնելու նպատակով:

▼M2

Հոդված 11բ

Հանձնաժողովը, անդամ պետությունների հետ համագործակցելով, սկսում է մթերատու կենդանիներին 17β-էստրադիոլի գործածության դեմ ամբողջական արգելքի մասին տեղեկատվական եւ իրազեկման քարոզարշավ՝ ուղղված ֆերմերներին եւ ԵՄ-ի անասնաբուժական կազմակերպություններին, ինչպես նաեւ ԵՄ-ից դուրս գտնվող համապատասխան կազմակերպություններին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված են սույն Հրահանգի շրջանակներում կարգավորվող՝ կենդանական ծագում ունեցող սնունդը ԵՄ արտահանելու գործում:

▼B

Հոդված 12

Խորհուրդը, Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա ձայների որակյալ մեծամասնությամբ, կարող է ընդունել սույն Հրահանգով նախատեսված կարգավորումների ներդրման համար անհրաժեշտ անցումային միջոցներ:

Հոդված 13

1. 81/602/ԵՏՀ, 88/146/ԵՏՀ եւ 88/299/ԵՏՀ հրահանգները սույնով ուժը կորցրած են ճանաչվում 1997 թվականի հուլիսի 1-ից:

2. Ուժը կորցրած հրահանգներին կատարված հղումները մեկնաբանվում են որպես սույն Հրահանգին կատարվող հղումներ եւ դիտվում են հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակին համապատասխան:

Հոդված 14

1. Անդամ պետություններն ուժի մեջ են մտցնում սույն Հրահանգին համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը՝ ներառյալ ցանկացած տույժ, 1997 թվականի հուլիսի 1-ին, իսկ բետա համազդիչների համար՝ ոչ ուշ, քան մինչեւ 1997 թվականի հուլիսի 1-ը: Նրանք դրա մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին:

Եթե անդամ պետություններն ընդունում են այդ միջոցները, ապա դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ներպետական իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

3. Նախքան սույն Հրահանգի՝ բետա համազդիչներին վերաբերող դրույթների կիրառումը, շարունակվում են կիրառվել համապատասխան ներպետական կանոնները՝ Պայմանագրի ընդհանուր դրույթներին համապատասխան:

Հոդված 14ա

Չնայած 3-րդ ՓՄ2 ————— ի հոդվածին եւ, չսահմանափակելով 2-րդ հոդվածը, գյուղատնտեսական կենդանիները, որոնց համար կարելի է հավաստել, որ նախքան 2004 թվականի հոկտեմբերի 14-ը, թերապետիկ կամ զոոտեխնիկական նպատակներով նրանց ներարկվել է 17β-էստրադիոլ կամ դրա եթերանման ածանցյալներ, ենթարկվում են նույն դրույթներին, ինչ նրանք, որոնք սահմանվել են 4(1) հոդվածի համաձայն թույլատրված նյութերի համար, որոնք վերաբերում են թերապետիկ նպատակներով օգտագործմանը, եւ, 5-րդ հոդվածի համաձայն, որոնք վերաբերում են զոոտեխնիկական նպատակներով օգտագործմանը:

Հոդված 15

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրը:

Հոդված 16

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

▼M1

ՀԱՎԵԼՎԱԾ I

Համեմատական աղյուսակ

▼B

Սույն Հրահանգը	81/602/ԵՏՀ, 88/146/ԵՏՀ եւ 88/299/ԵՏՀ հրահանգներ	
Հոդված 1(1)	Հոդված 1(1)	81/602/ԵՏՀ
	Հոդված 1(1)	88/146/ԵՏՀ
Հոդված 1(2)(ա) եւ (բ)	Հոդված 1(2)	81/602/ԵՏՀ
	Հոդված 1(2)	88/146/ԵՏՀ
	Հոդված 2(1)(բ)	88/299/ԵՏՀ
Հոդված 2(ա)	Հոդված 3	81/602/ԵՏՀ
Հոդված 2(բ)	—	
Հոդված 3	Հոդված 2	81/602/ԵՏՀ
Հոդված 4(1)	Հոդված 4	81/602/ԵՏՀ
	Հոդված 2 եւ հոդված 3(բ)	88/146/ԵՏՀ
	Հոդված 2(1)(ա) եւ (2) (4)	88/299/ԵՏՀ
Հոդված 4(2)	—	
Հոդված 5	Հոդված 4	81/602/ԵՏՀ
	Հոդված 2(1)(բ) եւ (2) (4)	88/299/ԵՏՀ
Հոդված 6	Հոդված 2(3)	88/299/ԵՏՀ
Հոդված 7(1)	Հոդված 7	88/146/ԵՏՀ

	Հողվածներ 2 եւ 3	88/299/ԵՏՀ
Հողված 7(2)	Հողված 4	88/299/ԵՏՀ
Հողված 8	Հողված 7	81/602/ԵՏՀ
Հողված 9	Հողված 4	88/146/ԵՏՀ
Հողված 10	—	
Հողված 11(1)	—	
Հողված 11(2)	Հողված 6(1) եւ 6(2)	88/146/ԵՏՀ
Հողված 11(3)	Հողված 5	88/299/ԵՏՀ
Հողված 11(4)	Հողված 6(7)	88/146/ԵՏՀ
Հողված 12	—	
Հողված 13	—	
Հողված 14	—	
Հողված 15	—	
Հողված 16	—	
Հավելված	—	

▼M2

Արգելված նյութերի ցանկ

Ցանկ Ա. արգելված նյութեր

- Հակաթիրոիդային նյութեր,
- Ստիբենները, ստիբենների ածանցյալները, դրանց աղերը եւ եթերները,
- 17β-էստրադիոլը եւ նրա եթերանման ածանցյալները:

Ցանկ Բ. արգելված նյութեր՝ շեղումներով

- Բետա համազդիչներ

▼M1

ՀԱՎԵԼՎԱԾ III

Պայմանականորեն արգելված նյութերի ցանկ.

Կտղուցածին (բացի 17β-էստրադիոլից եւ նրա եթերանման ածանցյալներից), այրածին կամ գեստագենային ազդեցությամբ նյութեր: